

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
Խրաքանչիւր թառին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Մի նոր կարգադրութիւն:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ալեքսանդրապոլից: Ներքին լուսին:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Սերբիա: Անգլիա: Նիդրլանդ: Արաբիա լուսին:—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խամայի Մէլիքութիւններ:

## ՄԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՒԹԻՒՆ

Ժողովրդական լուսաւորութեան նոր միջոցների երկու կարգադրութիւնները իրանց վրա առանձին ուշադրութիւն են դարձնում: Այդ կարգադրութիւնները խելացի և իրանց հետեւողներով վերին աստիճանի օգտակար կարող են լինել:

Առաջինն այն է որ հոգևոր սեմինարիաների մէջ ուսումնի ճարտարանները նորից թոյլ կը տրվի մտնել համալսարան. դա մեծ բարիք է, քանի որ վերջին ժամանակները սեմինարիաներում աւարտածները մուսաբաբով սեմինարիաները իրանց դպրոցի ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, մնում էին անգործ, մնում էին տարակուսած և յուսահատված, հնար չը գտնելով շարունակել իրանց բարձրագոյն ուսման ընթացքը և տեսնելով իրանց կեանքի ասպարէզը կտրված:

Նոր միջոցների մի այլ կարգադրութիւն, որ իր վրա առանձին ուշադրութիւն է դարձնում, մենք ուսու լրագրողներից արտասպառ ենք «Մշակի» ներկայ համարի ներքին լուսինի բաժնուհի: Ուսումնարանական շրջանների հոգաբարձուները իրաւունք կունենան իրանց սեփական իշխանութեամբ:

Հաստատել հասարակութեան հաշուով հիմնվող իրական գիմնագիտներ և պրոգիմնագիտներ, միայն այդ մասին տեղեկութիւն հաղորդելով միջնարութեանը: Վերջապէս այլ միջոցների շրջաբերականը հրաւիրում է հոգաբարձուներին համոզել իրական գիմնագիտներ կամ պրոգիմնագիտներ հիմնել ցանկացող հասարակութիւններին, այդ դպրոցների փոխանակ հիմնել օրինաբան տարրական ուսումնարաններ և իրական արուեստագործական դպրոցներ:

Այդ վերջին կարգադրութիւնը, մանաւանդ, շատ նշանակաւ է:

Վաղուց է արդէն որ հասարակական կարծիքը Ռուսաստանում նկատում էր թէ իրական գիմնագիտները, տարով աղջիկներին ընդհանուր ուսում և չընտելացնելով նրանց ոչ մի արհեստի, նպատակայարմար չէին: Իրական գիմնագիտները շատ օգտակար հիմնարկութիւններ են քիչ թէ շատ ունեւորի որդիների համար, տալով նրանց ընդհանուր գիմնագիտական ուսում: Բայց չքաւոր կանայք ի՞նչ գործադրութիւն պէտք է գրտնենին կեանքի մէջ իրանց ուսումը գիմնագիտներում աւարտելուց յետոյ, քանի որ իրական գիմնագիտ մի կողմից իր սաներին այն իրաւունքները չէր տալիս և չէր էլ կարող տալ, ինչ որ տալիս էր արական գիմնագիտները իր ուսումնարան աշակերտներին, իսկ միւս կողմից ոչինչ արհեստ կամ արուեստ էլ չէր սովորեցնում: չքաւոր օրինորդին, որ կեանքը մտնելով ստիպված էր իր ձեռքի աշխատանքով իր օրական ապրուստը հայթայթել:

Մի և նոյն ժամանակ աղքատ աղջիկը

եթէ տարի շարունակ ունեւոր աղջիկներն չէտ միասին նոյն նստարանների վրա նրատեղով ընտելանում էր ուրիշ կեանքին, աւելի լայն ցանկութիւններին և կենսական պահանջներին, —բայց դպրոցից դուրս գալով և իր ձեռքում ոչինչ գէնք չունենալով, ոչ մի արհեստ չիմանալով, չէր էլ կարող լրում տալ իր ցանկութիւններին, իր մէջ ծնած նոր, կենսական պահանջներին, անընդունակ էր լինում թէ իր գուրքը և թէ իր չքաւոր ընտանիքը իր ձեռքի վաստակով պահելու: Կրանից ծնվում էր խիստ աններդաշնակութիւն կեանքի պահանջների և ստացած ուսման մէջ: Իսկ հետեւեալը շատ անգամ կորստաբեր էր լինում օրինորդի համար: Գիմնագիտական ուսումը շատ անգամ յայտնվում էր շուտով իրեն չքաւոր էակների համար, իսկ շուտով իրեն ընտելանալը շատ անգամ անհամար անհամար էր կորստաբեր ձանապարհին:

Այդ պատճառով ժողովրդական լուսաւորութեան միջնարութեան վերջին առաջարկութիւնը ուսումնարանական հոգաբարձուներին, համոզել հասարակութիւնները հիմնել իրական տարրական կամ նոյն իսկ արհեստագործական դպրոցները, չէ կարելի ուրախութեամբ չը բարեկէլ, որպէս մի օգտակար և նպատակայարմար մի կարգադրութիւն:

Մեր ընթերցողները շատ լաւ յիշում են որ «Մշակը» իր հրատարակման առաջին տարիներից միշտ յայտնում էր նոյն միտքը մեր իրական գիմնագիտների վերաբերութեամբ, անդադար պնդելով որ աւելի նրա պատակայարմար կը լինէր հիմնել չքաւոր

օրինորդների համար արուեստագործական դպրոցներ: Նոյն միտքը մենք յայտնում էինք և մեր հայոց իրական դպրոցների մասին, բայց հասարակութիւնը արհամարհանքով էր վերաբերվում դէպի մեր յայտնած միտքը:

Մանաւանդ մեզ դարմանցում էր տեսնելով որ մի հայ հարուստ բարերար հիմնեց մի օրինորդական դպրոց յատկապէս աղքատ հայ աղջիկների համար, բայց այդ դպրոցի պրոգրամայի մէջ չը մտածեց մտցնել արուեստների դաստաւորութիւնը:

Աղքատ հայ աղջիկը այդ տեսակ դպրոցում ամէն բան էր սովորում, բացի այն առարկաներից, որոնք նրան կարող էին հայ տալ իր ուսումնի աւարտելուց յետոյ:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍԱՆԿՐԱՊՈՒՅՑ

Մայիսի 12-ին

Յայտնի է, որ Անդրկովկասում ապրող հայկաթօլիկ հասարակութիւնը դեռ չունի իր սեփական թեմական եպիսկոպոս, այլ նորա եկեղեցական իշխանութիւնը ստորադրած է Արասովի լատին եպիսկոպոսի իրաւասութեանը: Իսկ Արգովիի դերապայծառ հայկաթօլիկ եպիսկոպոսի եկեղեցական իշխանութիւնը տարածվում է միմյան նոր նուաճած երկրների հայկաթօլիկների վրա: Զանազան ներքին, օտարապետական անհրաժեշտութիւններից զրկված, անցանկաւոր Անդրկովկասի հայկաթօլիկ հասարակութիւնը ինչպէս ներկայացրեց կառավարութեանը ունենալու իր թեմական եպիսկոպոս, բայց դեռ ոչինչ հաստատ տեղեկութիւն չը կայ այդ ինչպիսի լուծման մասին, որին սպասում ենք մեծ յոյսով և անհամբերու-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

III

Տան և ութերորդ դարու սկզբներում Պարսկաստանում պատահեցան նշանաւոր փոփոխութիւններ, որոնք Ղարաբաղի մէլիքների դրութեան վրա ոչ սակաւ ազդեցութիւն ունեցան: Դա՛ն-Սուլթան-Յուսէյին թոյլ կառավարութիւնը ամէն կողմից հրաւիրեց Պարսկաստանի վրա նրա թշնամիներին: Ազդանները ապստամբվեցան. Վանդաւարի Միր-Մահմուդ-խանը, արշաւանք գործելով տիրեց պարսից մայրաքաղաքը՝ Սպահանը, և շահին դանկից անելով, ինքը թագաւոր դարձաւ (1722): Կովկասեան լեռնայնակները, Գաղստանի Ալի-սուլթանի և Սուրբ-Լիսանի առաջնորդութեամբ, հեղեղի նման թափվեցան, աւերակ դարձրին Վրաստանը, և պարսկական այլ նահանգները մինչև Սևանայ լիճը, մինչև Երասխ գետը (1721—22—23): Մի և նոյն ժամանակներում, Պետրոս մեծի կայսրութեան օրերում, (1722—1723) ուսմանը տիրեցին Կասպից ծովափերայ պարսկական զաւառները, որպէս էին Վերդնուր, Բաղուան, Գիլանը, Մազանդարանը և Աստրապատը: Հէնց այդ միջոցներում (1722—1723) օսմանցիք, տեսնելով ուսման իրանց սահմաններին մտանալը, և մանաւանդ տեղեկի լինելով Պետրոս մեծի աշխարհակալական ձգտումներին դէպի արևելք, դրաւեցին իրանց սահմանախից բոլոր պարսկական նահանգները: Երկու տարվա մէջ, մինք միւսից յետոյ տիրեցին նրանք ամբողջ Աստրապատական, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիսը,

Գանձակը և այլ պարսկական երկրներ, մինչև հասան Ղարաբաղի մէլիքների իշխանութիւններին:

Տեսնելով, որ բայցայլած Պարսկաստանը բաժան-բաժան է դառնում, Ղարաբաղի մէլիքները ևս մտածեցին մի մեծ պատառ իրանց ձեռքը ձգելու: Մինչև այնօր մէլիքները համարվում էին պարսից աւատական իշխաններ, իսկ այժմ կամեւում էին բոլորովին թօթափել պարսկական լուծը, և հայոց անկախ պետութիւն հիմնել: Իրանց դիտաւորութիւնների մասին խորհելու և կարգադրութիւններ անելու համար, նրանք՝ գաղտնի ժողովներ էին կազմում Գանձասարի վանքում, նոյն ժամանակվայ Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ:

Այդ ժամանակներում Ղարաբաղի հինգ մէլիքները հետեւեալ անձինքն էին.

- 1) Գիւլիստանում տիրում էր Մէլիք-Բեկ-Լարեան Մէլիք-Աբով II-ը:
- 2) Զրարեղ գոլում տիրում էր Մէլիք-Խարայեւան Մէլիք-Եսային:
- 3) Խաչէն ուսում տիրում էր Հասան-Ջալալեան Մէլիք-Գրիգորը, յետոյ նրա կողայր Մէլիք-Ալլահ-վերդին:
- 4) Վարանդայում տիրում էր Մէլիք-Շահ-Նազարեան Մէլիք-Յուսէյինը:
- 5) Տիգրակոսում տիրում էր Ղուկաս վարդապետի որդի Մէլիք-Եղանը (Աւանդ):

IV

Ղարաբաղի մէլիքների ձգտումները, իրանց հայրենիքում մի անկախ հայկական իշխանութիւն հիմնելու վերաբերութեամբ, նոր մտածութիւններ չէին: Կեռ 1701 թիւին նրանք ուղարկեցին Պետրոս մեծի մօտ որպէս պատգամաւոր Խարայեւ Օրբ անունով հնդկաստանցի հային Մինաս վարդապետի և մի քանի այլ անձինքների հետ: Նրանք

ներկայացան կայսրին Սովինսկի մէջ: Այդ դեպքում իրեն նպատակն այն էր, որ նրանք համոզէին կայսրին ընդունելու հայերին իր պաշտպանութեան ներքո, և հայեր այն ժամանակ իրանց սեպական ուժերով կը պատարագէին պարսիկների հետ, և կը թօթափէին իրանցից մասնաղական լուծը, և կընդունէին իրանց վրա ուսուցալորտանայ պետութեան հովանաւորութիւնը: Իրանց հայրենիքի փրկութեան գործը առաջ տանելու համար, յայտնեց Օրբին, հայերը արդէն պատրաստած ունեն Շամախու կողմերում 17 հազար զինուոր, Ղարաբաղում 60 հազար, իսկ Հայաստանի պարսկական 17 նահանգներից կարելի է հաւաքել աւելի քան 100 հազար հողի: Եւ եթէ կայսրը զօրեւոր այդ կողմերը կը դնէ, հայերը յանձն են առնում իրանց ծախքով պահպանել նրանց:

Որպէս արևելքի հետ լաւ ծանօթ մարդ, Օրբն ցոյց տուց կայսրին Հայաստանի քարտեզը, ծանօթացեց նրան հայոց հին պատմութեան և թագաւորների \*): հետ, և բայցարեւոյց այն օգուտները, որ կայրը կարող էր ունենալ Հայաստանը իր հովանաւորութեան ներքոյ առնելով: Նա յայտնեց, որ ինքը դիմել է եւրոպական և այլ պետութիւններին, և արդէն ստացել է Աւստրիայի կայսրի ու Բավարայի կայսրի քաջութիւնը, իրանց օգնելը միջոցներու ուսմանը հետ, Հայաստանի վերականգման գործը յաջողեցնելու համար:

Մեծ կայսրի արձուի աչքերը իսկույն նախադիտեցին այն մեծ շահերը, որ նա կարող էր բա-

\*) Ինչևէ այնօր Գանձասարի վանքի գրադարանում կարելի է տեսնել հայոց թագաւորների ձեռագիր պատկերների մնացորդները, որ պատրաստեցան այն ժամանակ Եւրոպայի թագաւորների ներկայացուցիչներու համար:

ղել, ձեռք առնելով մի ճարպիկ աւետարական և մի և նոյն ժամանակ պատերազմող ժողովուրդը, որի հետ ծանօթ էր նա դեռ իր երիտասարդական հասակում \*): Նրա աշխարհակալական ցանկութիւնների համար դէպի արևելք, նրա հետապնդ նպատակների համար կապելու Հնդկաստանը Ռուսաստանի հետ աւետարական յարաբերութիւններով, հարկաւոր էին հմուտ միջնորդներ և լաւ առաջնորդներ,—այդ գործիչներին նա գտնում էր հայերի մէջ: Այդ էր պատճառը, որ նա խիստ սիրով ընդունեց հայոց պատգամաւորների առաջարկութիւնը, և խոստացաւ չը խնայել իր օգնութիւնը հայերի իրանց հայրենիքի վերաբերութեամբ ունեցած դիտաւորութիւնները իրագործելու համար:

Բայց արևելքում մի վճռական գործ սկսելու համար Պետրոս մեծը ժամանակ չունեց, որովհետև նա զրաղված էր չլիզական պատերազմով, որը այդ միջոցներում աւելի սաստիկ կերպով բարդեցված էր: Բացի դրանից, նա հարկաւոր համարեց աւելի լաւ ծանօթանալ Պարսկաստանի նոյն ժամանակվայ դրութեան և քաղաքական հանդամանքներին հետ: Այդ մտքով Պետրոս մեծը կազմեց մի դեսպանութիւն, որի լիազօրը կարգվեցաւ նոյն իսկ Խարայեւ Օրբին \*\*), և ճանապարհ դրեց դէպի Պարսկաստան (1707) Դա՛ն-Սուլթան-Յուսէյինի մօտ:

Նրա ընկեր Մինաս վարդապետը մնաց Ռուսաստանում և շարունակում էր բանակցութիւն-

\*) Մեծն Պետրոս արտասահմանում գտնված ժամանակ, Հոլանդիայում ծանօթացաւ մի Աբրոս անունով զմիւսիցայի վաճառականի հետ, որին յետոյ հրակրեց Ռուսաստանում աւետարանելու: \*\*\*) Խարայեւ Օրբն այդ ժամանակ պոլիովնիկի աստիճան էր ստացել կայսրից:

Թեանքն Թէ որպիսի անհրաժեշտ պայմաններէն է յառաջացած այդ կարևոր խնդրը մեր մէջ, բաւական է ասել որ մեր հասարակական կեանքի բոլոր պայմաններում, ամեն բողբող զգալի է լինում մեր համայնքին հովուական բարոյական տեսչութեան պակասութիւնը որ և արդեւ է լինում մեր հասարակութեան մտաւոր և բարոյական յանաչ գիւմութեանը:

Այդ ամենապարզ ճշմարտութեանը մենք բոլորովին համոզված ենք, որպէս ամենամեծ անհրաժեշտութեան, աչքի առաջ ունենալով այն փորձերը և իրողութիւնները, որոնք յայտնվել են մեր հասարակական կեանքի մէջ: Ուրեմն, թող ներքին ինձ երկու խօսքով ցոյց տալու այդ խնդրի կարեւորութիւնը մեր հասարակական կեանքի մէջ, որպէս ժողովրդեան բարոյական կեանքի պահանջ, որպէս ազգային եկեղեցու հաստատութեան իրաւունք: Հայ-կաթովի ազգային եկեղեցին, իր լեզուով, ժողովրդական ընտանոթեանը, ազգային պատմական կազմակերպութեանը, ծէսերի և հաւատարեացի էութեանը բոլորովին օտար է լատինական եկեղեցուն, նոյնպէս լատինական եկեղեցին իր առանձնութեամբ տարբեր է հայ-կաթովիական եկեղեցուց: Լատին եկեղեցու անձնակազմը է հայ-կաթովի եկեղեցու մայրնի լեզուն, նա բոլոր պաշտօնական հարգողութիւնները կատարում է օտար լեզուով, որ շատ անգամ երկու կողմէն արգելք է լինում պարզելու ներքին, հասարակական գործերը կատարելու: Լատին եկեղեցու օտար կառավարութիւնը հետո լինելով Անդրկովկասից, հասարակական գործերի յարաբերութիւնները լինում են շատ դանդաղ և յետաձգելի, որից շատ անգամ առաջ են դալիս անվերջ անբաւականութիւններ: Լատին եկեղեցու անկարելի է կատարելապէս հասկանալ ժողովրդի ցանկութիւնները, հետաքրքրվել իսկական պահանջներին, ծանօթ լինել նրա մտաւոր և բարոյական կացութեանց հետ, որ ամենամանրակշիռ անհրաժեշտութեան է մի համարական համայնք բարոյական կառուարելու համար: Լատին եկեղեցու ձեռնարկելով հայ-կաթովի հասարակութեանը առաջարկված բանաձևեր, երբեք չէ կարող պատշաճաւոր հարցաքննութիւնը պահանջել նրանցից, առանց միջոց ունենալու ժողովրդի իսկական ցանկութեանց և ընտրելի քահանայացուների մտաւոր գործընթացները, ընդունակութեանը, բարոյականութեանը և արժանաւորութեանը ծանօթանալու, այլ պէտք է բաւականապէս թղթի վրա գրած վկայականներով: Այդ ամենամանրակշիռ հարցն է, որ զարթեցրել է ժողովրդեան ընդհանուր տրտուածը դէպի հովուականութիւնը, որ արժարձվելով ժողովրդի մէջ, պէտք է դառնայ ուսումնասիրութեան դիտար առարկայ:

Ճամանակի ստիպողական ոգին զարթեցրել է հայ-կաթովի հասարակութեան մէջ ազգային դատարարական անհրաժեշտութիւնը, բայց առանց բարձր սեփական իշխանութեան, առանց ժողովրդի վրա հողերու հակողութեան, — մենք մնացել ենք առանց ուսումնասիրների, առանց բարեկարգութեան և յառաջդիմութեան: Մի կրօնական, առանձնացեալ համայնքի մէջ միայն հողերակառուութիւնը կարող է գործել բոլոր ժողովրդական ներքին գործերում, առաջնորդելով ժողովրդը կրթութեան և զարգացման գործի մէջ: Ուսումնասիրների բացակայութիւնը պէտք է վերաբերել և մեր եկեղեցական նիւթական անուսումնասիրի վիճակին, որովհետեւ, առանց հողեր իշխանութեան անմիջական գիտողութեան, մեր եկեղեցական նիւթական վիճակը առանց հաշուաւորութեան է մնացել: Այդ ամեն անհրաժեշտութիւնը զգալուց յետոյ, ընտանապէս հարց է ծագում թէ կայ մեր մէջ այդ վեճ պաշտօնի համար արժանաւոր անձն, որ հաւատարիմ լինէր ազգային եկեղեցու սկզբունքներին, և զարգացած առաջնորդ ժողովրդեան բարոյական կեանքի մէջ:

Այդ նշանաւոր ընտրութեան համար, հայ-կաթովի հասարակութիւնը պէտք է ունենայ ընտրութեան մեծ խոհանութիւն, ժողովրդի իսկական ցանկութեան մեծ կապ, որ պէտք է կատարելապէս համապատասխանէ ժամանակի պահանջին և ընդհանուր ցանկութեանը: Անցեալ փորձերը, այն անհնուստին և սխալ ընտրութիւնները, որոնք տեղի են ունեցել մեր կրօնակիցներին մէջ Ա. Պետրուսով, որոնց հետեանք եղել է միշտ թշնամական բարոյական հաշտանքներ, և որոնք կրում էին հայ-կաթովի հողերակառուութեան հակազգային ընթացքի և ընտրութեան պատկերները: — այդ ընտրութիւնները մենք միշտ ի նկատի պէտք է ունենանք, նրանք մեզ համար պէտք է լինեն նախազգուշական օրինակ: . . .

Ամենքիս վերա բարոյական մեծ պարտականութիւն կայ հետաքրքրվելու այդ ժողովրդական հարցով, որովհետեւ, այդ հարցի իրականութիւնը միայն կարող է բարեփոխել մեր ժողովրդի ներկայ անշարժ վիճակը և նորա անտարբերութիւնը դէպի իր սեփական իրաւունքները: Թեմական հայ-կաթովի եկեղեցուական խնդրը է, որ պահանջում է բոլոր հասկացող բարեպաշտ անհատների ուշադրութիւնը: Այդ դէպքում, մեր կողմից անհրաժեշտ է օգնել մեզ արժարձելու և իրականացնելու այդ խնդրը, առաջարկելով իշխանութեան արդարադատ ուշադրութեանը հայ-կաթովի հասարակութեան այդ կենսական պահանջը ունենալու իր սեփական հողերու հովիւ: Կարծում ենք նոյնպէս որ և հռոմէական եկեղեցու միջոցներում նրան յաջողվեցաւ կատարել կայսրի գանապան յանձնարարութիւնները, յաջողվեցաւ հաւանք նրա ցանկացած բոլոր տեղեկութիւնները, և գաղտնի ուղարկել Ռուսաստան իր ընկեր Մինաս վարդապետին, որը իր կողմէն ներկայացնում էր կայսրին:

Իր դեսպանութեան խորհուրդը յաջողութեամբ կատարելից յետոյ, Օրին վերադարձաւ Ռուսաստան, տանելով իր հետ 200,000 ռուբլը արժէք ունեցող ընձանք պարսից Շահի կողմից Պետրոս մեծին:

Կայսրը այնքան գոհ մնաց դեսպանի գործակատարութեան համար, որ խոստացաւ տալ նրան 40 հազար զինուորներ իր հայրենիքը պաշտելու համար, իսկ նրա Պարսկաստանից բերած ընծաները հրամայեց գործ դնել պատերազմական ծախքերի վրա: Բայց Օրին ազնիւ մարդու յատուկ մեծանորութեանը հրամարկեցաւ կայսրի ընծաներից, յայտնելով, թէ հայերը կարծողութիւն ունեն նրա սղորմածութեանը միայն, իսկ զօրքեր իրանք պատրաստ ունեն, և որքան էլ հարկաւոր լինի, կարող են պարտասուել:

Բայց Վարդապի մէլքեցները շուտով գրկվեցան այդ կուսակցութեան հայրենասէրին, սրովհետ Օրին, կայսրի մի այլ յանձնարարութեանը Հաչատրեանից անցնելու ժամանակ, այնտեղ հիւանդացաւ և Հաչատրեանի վերականգնման բոլոր ցանկութիւնները իր հետ գերեզման տարաւ (1711): Բայց նրա սկսած գործը չը մեռաւ:

Օրին մահից յետոյ Հաչատրեանի որդի աստիճանաւորները կողոպտեցին նրա կայսրը և ըսկանցին զրգարտել նրան զանազան խարբիւթութիւններով մէջ: Մեծ ջանք էր հարկաւոր նրա ընկեր Մինաս վարդապետին, մինչև կարողացաւ ձեռք բերել յախճատակած կայսրի մի մասը և վերականգնել իր հանգուցեալ ընկերով պատիւ:

Գուն շատ ցանկալի պէտք է լինի տեսնել մեզ անկի ընական, ազգային ուղղութեամբ բարոյապէս զարգացած, մեր կրօնակիցների բարոյական, գիտակցական դատարարական գործին աւելի համակրող: . . .

Յոյս ունենք կրկին անգամ մանրամասնօրէն խօսել այն հասարակական խնդրների վրա, որոնք վերաբերում են Անդրկովկասում ապրող հայ-կաթովիների եկեղեցական ներկայ կառավարութեան վիճակին:

Պետրոս Բէպուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՊՐԱՎԱՍՏԱՅԻՆ 12-ից մեզ գրում են հետեւեալը: «Այս րօպէիս լսեցի որ այս զիշեր անյայտ չարագործներ մտնելով մի կիս շաբաթ անընդմեջ են նրան և խեղդել նրա մօրը, տանելով ուղեղէն զարդեր: Այստեղ սպանութիւններ, առհասարակ, շատ սովաւ են պատահում. տարիներ անցնում են որ մարդասպանութեան ոչ մի դէպք չէ պատահում»:

Այս տարի գարունը Թիֆլիսում շատ խոնաւ և անձրեային է: Օր չէ անցնում, որ անձրե չը դայ:

«Россия Вѣдомости» լրագրում կարգում ենք: «Կեղ գրում են Ս. Պետերբուրգից որ ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեամբ դիմել չըբարեկամելով ուսումնասիրական շրջանների հողարքաճանկերով, առաջարկելով նրանց որ դեմաժօնեցին, քաղաքային հասարակութիւններից և մասնաւոր անձերից իրական նոր գիմնադրանք կամ պրօգրմնադրանք հիմնելու համար խնդրէր ներ ընդունելու ժամանակ, աշխատեն համոզել խնդրատուներին որ իրական գիմնադրանք կամ պրօգրմնադրանքի տեղ, հիմնեն տարրական իրական դպրոցներ և գուզընթացաբար նրանց հետ, կամ նրանցից ջոկ, օրիորդական արուեստագործական դպրոցներ և կուրսեր: Հակառակ դէպքում, այսինքն երբ ուսումնասիրական վարչութեան ջանքերը անաջող լինեն, հողարքաճանկերը այլ ևս չը դիմեն ամեն անգամ միջնորդութեանը հասարակական հաշու հիմնելով իրական գիմնադրանք կամ պրօգրմնադրանք հաստատելու համար թայլուտութիւն ստանալու, այլ իրանց իշխանութեանը բանաւ այդ տեսակ ուսումնասիրներ, միմիայն իրաքանչիւր նոր իրական գիմնադրանք կամ պրօգրմնադրանք բանաւ մասին տեղեկութիւն տան միջնորդութեանը, հողարքելով, մի և նոյն ժամանակ, թէ ինչ ծախսերով պէտք է պահպանվի իրաքանչիւր դպրոցը»:

V.

Օրին մահից յետոյ նրա ընկեր Մինաս վարդապետը շարունակեց նրա սկսած գործը: Նա Ռուսաստանից չը հեռացաւ և կատարում էր միջնորդի պաշտօն կայսրի և Գանձասարի վանքի «հայոց ժողովի» մէջ, որ խմբվում էին խորհրդի համար Վարդապի մէլքեցները: Այդ կուսակցութեան վարդապետը, թէ և նշանակված էր այն ժամանակ Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս, բայց աւելի քաղաքական գործերով էր զբաղված, քան թէ եկեղեցական: Նա իր գաղտնի գործակատարները տարածել էր Պարսկաստանի բոլոր նշանաւոր տեղերում, որոնք ամեն կողմէն նրան տեղեկութիւններ էին հաղորդում: Նրա գործակատարներից ոմանք արժանացան կայսրի առանձին ողորմածութեանը: . . .

Այդ ժամանակներում Պարսկաստանում հեղափոխութեանը զարթոյցները մէկն էր Սարգիս դիւլիանցի, որի հետաքրքրի օրագրութիւնը, Պարսկաստանի այն ժամանակվայ անցքերի վերաբերութեամբ, տպվեցաւ «Գուռն» ամսագրում: Իսկ 1870 թիւն պրօֆէսոր Բ. Պատկանեանը ռուսերէն թարգմանելով, որպէս հարուստ պատմական նիւթ, ներկայացրեց Ս. Պետերբուրգի կայսրական ակադեմիային:

Գրանցից մէկն էր Նաւասարդ անուրով մի հայ, որի մատուցած ծրարութիւնների համար կրկին կամեցաւ վարձատրել նրան, Նաւասարդին գտան Պարսկաստանում վախճանված, առանց ժառանգ անգամ թողնելու: Մնացել էր միայն Վազար անուրով մի հայ, որ ծառայում էր հանրաքանակի մօտ և ծանօթ էր նրա գործերին: Կայսրը կանչել տուցեց այդ Վազարին և արժանացրեց գնեկալի աստիճանի: Գա մի և նոյն գնեկալի Վազար խրիտոսոֆօրովիչն էր, որ հայրենիք կազմելու մի առանձին գործարքի հրամանատար դառնալով բաւական նշանաւոր գործեր կատարեց Պետրոս մեծի պարսկական արշաւանքների ժամանակ: Յետոյ (1736) իր զօրքով և հայ օֆիցերներով տեղափոխվեցաւ Վազար:

Ստացանք Թիֆլիսի վանքի մայր-եկեղեցու Յովհաննէս առաջ քահանայ Սարգսեանից 50 ռուբլ, Գարականայում փուլ եկած շինութեամբ սպանված 7 հողի հայ մշակների որացած ընտանիքների օգտին: Այդ փողը կը յանձնենք նոյն անձանց, որոնց յանձնեցինք առաջին փողերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՍԵՐԻՍԱ

Բէլգրադի թատրոնի մէջ պատահած անկարգութիւնների մասին «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը: Օտար ազգեցութեանը ենթարկվելով, մեր արմատականները օգուտ քաղեցին Սարգուի «Բաբազա» պիեսայի ներկայացումից մի ցոյց անելու համար, որ կարող էր պատճառ դառնալ նշանաւոր անկարգութիւններին: Գեո. ներկայացումից մի քանի օր առաջ տոմարները ծախված էին և թատրոնի զիրեկցեան նկատել էր, որ նրանց դնողները թատրոնի սովորական սյցերուները չէին: Ներկայացման ժամանակ թատրոնը լինել էր: Այնտեղ էին թագուհին և ներքին ու հողերու գործերի միջնորդները: Գեո. վարապոյրի բարձրանալուց առաջ դահլիճի մէջ վրդովմունք էր նկատվում, իսկ երկրորդ արարուածի ժամանակ սկսվեցաւ անկարգութիւնը: Գալերէյից, պարտերից և լօժաներից այնպիսի աղաղակ բարձրացրին, որ անկարելի էր շարունակել ներկայացումը: Թագուհին իսկոյն պալատը ուղեորվեցաւ, իսկ միջնորդները իրանց ընտանիքների հետ դնացին տուն: Թատրոնական դահլիճը շուտով դատարկվեցաւ: Անկարգութիւն գործողները արմատական լրագրագետներ, ուսանողներ և բանուորներ էին: Հէնց որ թատրոնական հրապարակի վրա երեկոյան ժամադրանքներ, նրանք յարձակվեցին վերջինների վրա և սխեցին նրանց հարուստել քարերով, փայտերով և այլն: Ժանդարմները ստիպված էին մերկայանալ սրերը: Շուտով զօրանոցից զինուորներ եկան, բայց նրանց գալուց յետոյ էլ երեք ժամանակագրութիւնները շարունակվում էին: Թէ ամբողջի և թէ ժանդարմների

հետ կատարվեցան 1721, 22 և 23 թվերի անցքերը, որ նկարագրեցինք մեր III-րդ գլխում: Հաս-Սուլթան-Յուսէֆը դահլիճէ կաւ. աղանները տիրեցին պարսից մայրաքաղաքին. օսմանցիք սկսեցին գրաւել իրանց սահմանակից պարսկական նահանգները: Ալեքէվիների պետութիւնը իր կատարելի քայքայման վիճակի մէջ էր գտնվում: Բայց ռուսները փոխանակ Հայաստանի վրա ուշադրութիւն դարձնելու, սիրում էին կասուպից ծովազերայի պարսկական գաւառները:

Ալեքսեւրը կրկին սկսեցին դիմել դէպի ռուսաց արքունիքը: Նրանց պատուիրակները, որպէս էին Յովհաննէս երեքը, տէր Անուօնը, տէր Պետրոսը, Ալեքէր-Եօփանը, Արիօն Պապովը անդադար դիմում էին դէպի Ռուսաստան և Մինաս վարդապետի միջնորդութեամբ հայոց մէլքեցների, Նայի և Ներսէս կաթողիկոսների խնդրանքները ներկայացնում էին կայսրին: Պետրոս մեծը միշտ պատասխանում էր նրանց իր ամենապարտաւոր խոստումներով, խորհուրդ էր տալիս սպասել, յուսադրելով, թէ նրանց բոլոր բարձրանքները կատարված կը լինեն: Այդ բանակցութիւնները անեցին մի քանի տարի: Եւ որովհետեւ Վրաստանն էլ այդ ժամանակ մի և նոյն դրութեան մէջն էր ինչպէս Հայաստանը, այսինքն օսմանցիք այնտեղ էլ էին տիրել, այդ պատճառով վրայիներն ևս հայրենի նման մի և նոյն խնդրեցներով դիմում էին կայսրին: Վերջը հայերը պատասխան ստացան, որ իրանց ուժերը միայնակ վրայիներին հետ և ըստպատման մինչև այն ժամանակ, երբ կայսրը ինքն անձամբ ռուսաց զօրքերով կը գայ պարսկական նոր դրաւակ ճակերը և վրայիները, միանալով ռուսաց զօրքերի հետ, կարող են սկսել ապստամբութեան գործը: (Կը շարունակվի)

ներք Գանձասարի վանքի «հայոց ժողովի» կողմից ռուսաց արքունիքի հետ:

Օրին իր Պարսկաստանի ճանապարհորդութիւնը կատարեց Հայաստանի վրայով, անցաւ Շամախու, Վարաբադի, Նախիջևանի կողմերով, որպէս զի, ասելի մօտից տեսնել հայոց պատարասութիւնները, իրախուսէ նրանց, և զրգուէ պարսից դէմ յօգուտ Ռուսաստանի:

Բայց չը նայելով, որ նրա դեսպանատնակը ծածկված էր Հ.Պ.Պ. պապի դեսպանութեան անմեղ անուանով, որը արեւելքում որ և է քաղաքական շահեր ունենալ չէր կարող, այսու ամենայնիւ, մինչև Օրին պարսից մայրաքաղաքը հասնելը, Շամախու կառավարիչ Մուսարէկեան Հիւսէյն-խանը \*) խնայում տուցե շահին, որ այդ Օրին աշխատում է հայոց թագաւորութիւն հիմնել, պարսիկների իշխանութիւնը ոչնչացնել և այլն: Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ, Շահը այն ատրիճան վրդովվեցաւ, որ մինչև անգամ չէր կամենում ընդունել պապի պատրաստակալ դեսպանութիւնը: Բայց Օրին մի լաւ դիպլոմատի յատուկ ճարտիւղութեամբ կարողացաւ փարատել Շահի տարակուսանքները և Սպահանում փառաւոր ընդունելութիւն գտաւ:

Օրին մնաց Սպահանում մի քանի տարի: Այդ

\*) Այդ Յիւսէյն-խանը արուէլէյի էր, ազգով հայ, Մուսարէկեանց տնից: Նրա մի եղբայրը, որ կոչվում էր Մեհմետ-Վ.Օւլի-խան, նոյն ժամանակ երևանում պարսից փոխարքայ էր: Այդ վերջինը մեծ տուգանքի ենթարկեց Էջմիածնի վանքը, երբ կասկածեց, որ Վատուածատուր կաթողիկոսը գաղտնի բանակցութիւններ ունի վրայ իշխանների հետ, և կամենում է միանալ նրանց հետ Հայաստանը պարսից լծից ազատելու համար: Առհասարակ մահմադականութիւնը ընդունած Մուսարէկեան եղբայրները մեծ միաս տուեցին հայոց ապստամբութեան գործին:

մէջ մի քանի վիրաւորվածներ կան: Վիրաւորված է նոյնպէս մի բժիշկ, որի առաջարկութեամբ փոխադրվեցաւ արմատականներն ծաղրող պիեսան: Քաղաքը հրամայել է ամենախիստ քննութիւն անել և անկասկածելի է որ մեղաւորները կը պատժվեն:

**ԱՆԿՈՒՄ**

Երբ որ տեղ վիճաբանութիւնները յետոյ անգլիական համայնքների ժողովը 383 ձայների մեծամասնութեամբ 45-ի դէմ ընդունեց առաջարկութիւնը իրանդիայի մէջ ստիպողական օրէնքներ մտցնելու մասին, գրում է «ԴՈՅՈՍԵՅ»: Ազատամիտ կառավարութեան երկու անգամների արիւնով շաղկապած կողմը վրա այնպիսի դրութիւն է ստեղծվում, որ հաւասար է պատերազմական դրութեանը: Երբեք անգլիական գաղութները կը բերք անդամները, որոնք կը վճռեն մեղաւորութեան հարցը և դատաւճիռներ կը կայացնեն: Վարչական իշխանութիւնները իրաւունք են ստանում կալանաւորել խուզարկութիւններ անել և աքսորել իրանդիայիներէն, նոյնպէս և արդիւն չհրապարակական ժողովները:

Վարչատն վերջապէս զիջումն արաւ պահպանողական ընդդիմադրականները պահանջին: Այդ իրողութիւնը զարմանալի չէ, եթէ ի նկատի առնենք, որ զանազան դեռ ևս անյայտ պատճառներով Վարչատն չը կարողացաւ հրաժարվել իր պաշտօնից և իշխանութիւնը այնպիսի մարդկերանց յանձնել, որոնք նրա պէս կապված չեն իրանդիայի հետ հաշտվելու նախադրով: Անգլիայի մէջ կարելի է կառավարել միայն պարլամենտի օգնութեամբ և իրանդիական ստիպողական օրէնքները պաշտպանելու համար կապված մեծամասնութիւնը սպառնացնանում է, որ Վարչատն կը զրկվի պարլամենտի պաշտպանութիւնից, եթէ Վարչատն մէջ կատարված սպանութիւնները յետոյ պաշտպանել իր նախկին քաղաքականութիւնը: Պահպանողականները ի հարկէ դիտելով, թէ ինչ են անում, երբ առաջարկեցին կառավարութեանը իրանց պաշտպանութիւնը այն պայմանով, որ Վարչատն հրաժարվի իր հաշտողական քաղաքականութիւնից: Նրանց համար աւելի հեշտ և շահաւէտ էր յանձնել Վարչատնի միջնորդութեանը ստիպողական օրէնքների մտցնելը իրանդիայի մէջ: Այժմեան ընդիմադրականներից և չափաւոր ազատամիտներից մի մեծամասնութիւն կալվելը շատ գծուար էր և աւելի էլ գծուար էր այդպիսի մեծամասնութեանը համապատասխանող միջնորդութիւն կազմել, որովհետեւ չափաւոր ազատամիտները երբեք պատասխանատուութիւն չէին ընդունի պահպանողականների առաջարկած ստիպողական օրէնքների համար: Աւելի հեշտ էր գործունէութիւնը յանձնել այն կառավարութեանը, որի հաշտեցնող նախադէմն Վարչատնի մարդապանները չարազործութեամբ պատասխանեցին: Վարչատն ի հարկէ կարող էր հրաժարվել այդ դերից, բայց իբրև շեղմ աղաւթը նա չը կամեցաւ գծուար փոխվում թողնել իր պաշտօնը և ներկայացրեց պարլամենտին ստիպողական օրէնքների նախագիծը:

**ԵՐԿՐԱՏՈՒ**

Ներկայական խեղճի ծաղրալի հաշտութիւնը իր միջնորդների հետ չարազնացնող անգլիական և ֆրանսիական նաւատորմներին

ուղեւորվել Ներկայտու, գրում է «ԴՈՅՈՍԵՅ»: Անգլիական և ֆրանսիական նաւերը միացան Արևա կղզու մոտ և ուղեւորվեցան Ալէքսանդրիա: Այդ նաւերը Սուդանի նաւահանգստից հեռացան աւելի շուտ, քան թէ այնտեղ կը հասնէր թիւրքաց նաւատորմը: Լուսն-փաշայի հրամանատարութեամբ, որին պատուիրած էր միանալ անգլո-ֆրանսիական նաւատորմի հետ: Թիւրքաց նաւերը երեւի Ալէքսանդրիա կուղեւորվեն, որովհետեւ նրանց վրա դառնվում են այն զօրքերը, որոնք Անգլիայի և ֆրանսիայի համաձայնութեամբ հարկաւոր դեպքում պէտք է ավելին Ներկայտուի մէջ հանդատութիւնը վերականգնելու համար և որոնք պէտք է անյապաղ հեռանան Ներկայտուից, հենց որ այդ կը պահանջեն ֆրանսիական և անգլիական ներկայացուցիչները:

Թիւրքաց այդ զօրքերը, եթէ հարկաւոր կը լինի նրանց գործածել, բաւական դժուարութիւններ կը պատճառեն անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչներին: Տարածված լուրերի համեմատ, սուլթանը չափազանց անբաւական է եզրուական խեղճի ճեպիկ-փաշայից, որ օգնութեան համար դիմեց Փարիզ և Լոնդոն և ոչ Վ. Պիտի: Մինչև անգամ հաւատացնում են, որ Արդու-Համիդ մտադիր է դահլիճէջ անել այժմեան խեղճիին և նրա առջ մէկ ուրիշին նշանակել: Ի հարկէ այն պետութիւնները, որոնց նաւատորմները այժմ դառնվում են եզրուական շրերի մէջ, չեն թոյլ տայ, որ զորքը այդպիսի վախճան ստանայ: Այդ պետութիւնները հիւսկանները կը հսկեն, որ թիւրքաց զօրքերը միայն իրանց տուած յանձնարարութիւնը կատարեն, այսինքն արդիւն դեն ներկայական զօրքերի սպասարկութեանը:

Բայց իսկպէս այդ սպասարկութիւնն էլ շատ քիչ հաւանական է: Կայրէից ստացված մի քանի տեղեկութիւններից երևում է, որ Արաբի-փաշա կորցրել է իր ազդեցութիւնը Ներկայական զօրքերի վրա: Հաւատացնում են, որ զինուորական այդ բազմախիւրը երկար ժամանակվայ արձակուրդ է ստացել և ուղեւորվել է Արաբիա ճանապարհորդելու: Եթէ ճշմարիտ Արաբի-փաշա կը հեռանայ Ներկայտուից, զուցէ այլ ևս հարկաւոր չի լինի, որ թիւրքաց զօրքերը ավելին:

Ուրեմն այս վերջին դեպքում ի՞նչ պէտք է անեն եզրուական շրերի մէջ անգլիական, ֆրանսիական և թիւրքաց նաւերը: Փարսիկ կիսապաշտօնական շափաթի ընկերութիւնը իբր թէ անգլիական և ֆրանսիական հիւսկանները պատուէր են ստացել նաւատորմի հանելուս պէս պահանջել, որ եզրուական զօրքերը արձակվեն և Ներկայտուից աքսորվեն այն գնդապետները, որոնք մասնակցել են քաղաքական անկարգութիւններին: Շափաթի ընկերութիւնը անգլիական լրագրիչներին հաղորդութիւնները այդպիսի պատուէրի մասին տարածում է անուսնում: Ինչպէս երևում է, տարածված այդ լուրը սխալ է: Արձակել բոլորովին եզրուական զօրքերին կը նշանակի անհրաժեշտ դարձնել այդ զօրքերին փոխարինել մի այլ զինուորական զօրքերը, բայց անհրաժեշտ է փոքրացնել այդ զօրքերի թիւը, որ Արաբի-փաշա իր յեղափոխական նպատակների համար հասցրել էր 30,000-ին և որ բոլորովին չէ համապատասխանում Ներկայտուի

ոչ պէտքերին և ոչ էլ ֆրանսիական միջոցներին: Եթէ Արաբի-փաշայի նշանակված հրամանատարները հեռացվեն, իսկ զօրքերի թիւը փոքրացվի, խեղճի կունենայ իրան հաւատարմի զօրքեր, որոնք բաւական կը լինեն Ներկայտուի մէջ հանդատութիւնը պահպանելու համար: Եթէ անգլիական և ֆրանսիական նաւատորմների հրամանատարները այդ նախադէմ համեմատ հրահանգներ ունեն, ուրեմն անգլո-ֆրանսիական ճեպիկից ցցը առանց օգտակար հետևանքների չի մնայ և եզրուական հարցին այնպիսի ուղղութիւն կը տայ, որ հեշտ կը լինի նրան լուծել Ներկայտուի նաւատորմը:

**ԱՐՏՈՒՄԻՆ ԼՈՒՐԵՐ**

—Լրագրիչների մէջ կարգում ենք, որ գերմանական պարլամենտի երկուստեան անդամները, կենտրոնի և լեհացիների օգնութեամբ մէկ առաջարկութիւն մտցրին, որի մէջ պահանջում են սահմանաւորվեան այն յօդուածի ջնջումն, որով զիտատուրա է նշանակվում Եզրու-Վարչատնը: Այդ առաջարկութիւն մէջ պահանջվում է նոյնպէս, որ Եզրու-Վարչատնի պատգամաւորները, որոնք գերմաններն լեզու չը գիտեն, կարողանան, որպէս բացառութիւն, ֆրանսիական լեզու գործածել:

—Վարչատնից հաղորդում են, որ Վարչատնի շրջանի բարձրագոյն դատարանը վաճառեցրեց Վիտի մասնաւոր դատաւարութիւնը:

—Կեօնի լրագրիչն մայիսի 18-ից Լոնդոնից գրում են. «Վերջին ժամանակում բարկ կալանաւորվածները Վարչատն կրկին արձակվեցան: Ներկայ փոքրամասնութիւնը պիտի օգնէ Նիւթ Նիւթի մարդասպաններին կայանաւորելու համար: Նոյնպէս ոչինչ հեռանքներ չունեցան Ամերիկա հասնող նաւերի խուզարկութիւնները: Չը նայելով այդ հանգամանքին, մարդասպաններին միմեկուսի պտուտում են, մասնաւոր այն ժամանակից, երբ այստեղի արտաքին գործերի միջնորդութիւնը յարաբերութիւններ կապեց Միացեալ-Նահանգների նախագահի հետ և նրանից խտամունքներ առաւ ամեն տեսակ օգնութիւններ հասցնել մարդասպաններին դառնելու համար:

—Ներկայտուի լրագրիչներին հաղորդում են, որ Արաբի-փաշա վճռեց զէնքով ընդդիմադրել անգլո-ֆրանսիական միջնորդութեանը եզրուական գործերում: Նա հաստատուեց յայտնի զօրքի օգնութեան վրա և 4000 հոգուց բաղկացած զօրք կանչեց Կայրէի և Ալէքսանդրիա:

—Համալսի ընկերութեանը՝ Կայրէից հաղորդում են, որ լուր է տարածվել, թէ Նիւթատնները կը սնունդ միջնորդութեան հրաժարականի վրա: Նոյնպէս կը պահանջեն, որ Արաբի-փաշային և նորերում կցած շարժման այլ առաջնորդներին արտաքին Ներկայտուի սահմանները:

—«Times» լրագրիչն Պարիզից հեռագրում են, որ անգլո-ֆրանսիական միջնորդութիւնը եզրուական գործերում մէկ նպատակ ունի, այն է վերականգնել խեղճի Ներկայտուից: Վրա համար անհրաժեշտ է համարվում արձակել անուսնիների ժողովը, հեռացնել Արաբի-փաշային քաղաքական գործունէութեան առաջնորդից և ֆրանսիային ու Անգլիային վերադարձնել իրանց նախկին զերալիզող ազդեցութիւնը Ներկայտուում:

—Լէյպցիգի դատարանը մայիսի 19-ին, մէկ ամսուայ բանտարկութեան դատաւարուից սօցիալական կոտակցութեան յայտնի պատգամաւոր Բեռլին գերմանական դահանգական խորհուրդը վիրաւորելու համար և իր դրած բրոշուրի մէջ արհամարհանք գրեցելու համար զէպի պետական հիմնարկութիւնները:

—«Presse» լրագրիչն Լոնդոնից հաղորդում են, որ մայիսի 4-ին երեկոյան ոտնխնամութիւնը կալանաւորեց «Freiheit» լրագրի սպարանը, միւս օրը բանտարկվեցաւ սպարանատէր Մեռախ: Նա մեղադրվում է այն բանում, որ նա գրգռուիչ յօդուած է տպել Վարչատնի սպանութեան առիթով: Հրամայված է խնդրութեան անցում 30-նիւնիսի ևս կալանաւորել:

—Գաղտնաբերական քննութիւնը Վիեննայի Ռինգ-թատրոնի հրէի առիթով վերջացան: Թատրոնի

զիրեկտոր, Եստենը չորս ամսով բանտարկութեան է դատաւարված:

—«France» լրագրիչն Բերլինից հաղորդում են, որ իշխան Բիանարկի առողջութիւնը այնքան վատ չէ, ինչպէս տպված է լրագրիչներում:

—«Evening News» լրագրիչը, որ յարաբերութիւններ ունի իրանդիական կոտակցութեան առաջնորդների հետ Ամերիկայում, հաստատում է, որ Վարչատնի սպանութիւնը մտածել էին Միացեալ-Նահանգների իրանդիական իրաւաբանները: Վկայում վճռված էր սպանել Վարչատնին, Ֆորստերին և Բուրկին, բայց երբ սպանութեան համար ընտրված անձինք Անգլիա հասան, նրանք Ամերիկայից տեղեկութիւն ստացան, որ Վարչատնի մահուան դատաւճիռը ոչնչացրած է:

**ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ**

Հարսանիք դրամատիքական վերջաւորութեամբ: «Одескій Вѣстник» լրագրիչը հաղորդում է, որ մայիսի 25-ին, Լիւբլինեան գունդի զինուորական եկեղեցում կատարվում էր մէկ ժամադրման օգնութեամբ պատկեր 18 տարեկան մէկ գեղեցիկ աղջկայ հետ: Երանապատրութիւնը վերջացնելուց յետոյ, նորապսակները գնացին հարսանեաց խնջույք կատարելու մէկ վարձված դահլիճում: Գրէկիսի փողոցի վրա, ուր դառնվում է Վիտայի գինետունը: Պարզ շորտակվեց մինչև կէս գիշերը: Յետոյ ընթրիքի նստեցան և նորապսակներին, ինչպէս սովորութիւն է, ամենապատուաւոր տեղը նստեցրին: «Վարչատն կենացները: «Նորապսակների կենացը» կանչեց մէկը բարձր ձայնով: «Ուրա», «ուրա», լրագրիչն ամեն կողմից հիւրերի աղաղակները: Քիչի ամենայաւ ժամանակը մտնում է դահլիճը մէկ երկուստարդ կին գրկած ունենալով մէկ երկայն: Այդ կինը շտապով մտնելով սեղանին և դնելով իր որդուն սեղանի վրա, ասեց հետեւեալ կարծ, բայց աղբու խօսքը. «Թոյլ տուր քո որդուն էլ քեֆ անել հարսանիքումը»: Նորապսակներ, նորապսակները և հիւրերը բոլորն էլ աղջեցան այդ անպատեղի դէպքից: Նորապսակը ուշաթափվեցաւ: Բոլոր հիւրերը վերկայան և ստան գնացին, չը նայելով որ նորապսակայի նախկին սիրուհուն ժամադրմանը դուրս տարան դահլիճից:

Գաղտնաբերական դահլիճը Մեկսիկայում: Մեկսիկայից մէկ առանձին ընդունականութիւն ունեն աղաւթ և համարձակ պահել իրանց դատաւարական տեղերում: Այդ համարձակութիւնը շատ դուր չէ գալիս Երազայիներին, որոնք դատարանի վրա ծանր և հանդիսաւոր աչքով են նայում: Բոլորովին ուրիշ սպաւորութիւն է գործում գաղտնաբեր Մեկսիկայում: Մտեց, օրինակ, այդ երկրի մարտադրաբի դատարանում այն բազմիկ, երբ քննվում է մէկ շատ ծանր գործ: Գաղտնաբերական սպանութիւն կողակտերու նպատակով: Այդ հանգամանքը, այնուամենայնիւ, ոչքին չէ արդեւում որպէս տանը դրալ իրան: Նախ և առաջ ծնում են բոլորը և իրաքանչիւրը, ծխախոտը, ինչպէս յայտնի է, անբուխարակի սեփականութիւն է կազմում ոչ միայն իւրաքանչիւր մեկսիկայում, այլ և իւրաքանչիւր մեկսիկայում: Նախ, և այդ պատճառով գաղտնաբեր գահլիճումն էլ չեն կամենում ծխախոտից բաժանվել: Պրոկուրորը ծխում է, ծխում է դատաւորը, ծխում են յանցաւորին ընդող զինուորները, ծխում է հասարակութիւնը, պաշտպանը, և մինչև անգամ ինքն սպանութեան մէջ մեղադրվող աւագակը: Վերջինին մի ժամ է մտում ապրելու, դահլիճը արդէն պատարաստել է չուանը նրա վրէ համար, ուրեմն կենացի վերջին րօպիներում ինչի գրկել նրան այդ բաւականութեանից, անկասկած, ասում են մեկսիկայիցները: Եւ յանցաւորը մի տեսակ կատաղութեամբ ծխում է այն րօպիին, երբ դատաւորը կարգում է նրա մահուան դատաւճիռը: Ինքն իրան հասկանալի է, որ դատարանի գահլիճում ծխելը սովորութեան հետևանք է և բոլորովին չէ նշանակում թէ մեկսիկայիցները առանց յարգանքի են վերաբերվում արդարադատութեան գործին, թէպէտ և երազայիցներին այդպէս կարող է երևալ:

Վայրենի գաղտնիքը Ալեքիւրայում: Անցեալ տարի Ալեքիւրայում սպանված վարենի գաղտնաբեր թիւի հաշիւը ցոյց է տալի, որ այդ թիւը աստիճանաբար պակասում է, որովհետեւ

այն ժամանակից որ երկիրը լցվում է ֆրանսիական զորքերով...

«Unsere Zeit» ամսագիրը հարգարժան է հետևելու հետաքրքիր փաստեր, որ ցույց է տալիս ուղիղ յատկությունը...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՑ

ՁԱՆԱՆՈՂԻ 17 մայիսի: Այսօր ժամը երեքին կեսին, աղանձի ձուկ մեծությամբ եկած կարկուտից յետոյ, եղաւ այնպիսի սաստիկ փոթորիկ, որ մինչև հիմքը քանդեց շատ աններ և տարաւ երկաթեայ կտուրներ արքունի հաստատ շինություններից: Բնակիչներին պատեց սարսափ մեզանում զեռ երբեք չեղած այդ սոսկալի երեցյթի պատճառով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐՑ ՈՐ ԱՆԱՐՈՒՆԷ ԹԻՖԼԻՍԻ ՈՐՈՒՅՁԱԿԱՆ ԽՆԱԽՈՒՄԻ ՈՒՍՈՒՑՁԻ ԿՈՄԻՏԵ

Въ Редакціи газеты «МШАКЪ» Продается БРОШЮРА «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМІАНЪ.» Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵԻ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. զեւեղը, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. հարկը, սապօն 3 Կ. հատը, արևի ժԱՄԱՑՈՑՆԵՐ 50 Կ., ՇՂԱՆԵՐ (նոր ուկուց) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կեփեր 25 Կ., կախարաններ 4 Կ., ՖԻՏՐԱՆԵՐ 3 Կ., ՏՐՃԻՆԵՐ 1 Կ., հայելիներ 35 Կ., վարակներ 4 Կ., պիջակներ 6 Կ., ԱՄՔՈՂ ԶԱԳՈՒՍ 13 Կ., զկտարներ 1 Կ., չը թըջող վերարկուներ 6 Կ., շէտակա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼՔԱՆԵՐ 2 Կ. 50 Կ. զեւեղը, ՄԵՂՐԱՄՈՒ 32 Կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 Կ. ֆունտը, ԳՐԱՊ, տրիկօ, ԱԼՔՈՒՆԵՐ, բրտանական մետալի առարկաներ և այլն կԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էֆան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԷՑ:

ВЪ СМЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ ВЪ СМЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

ԲԱՅՅԻ Գ. Ա. Ի. Թ. Բ. Է. ԳԻՐԲ ԵՐՐՈՂԻ Բաղկացած է 563 երեսներից ԳԻՆԷ 2 ԲՈՒՐԼ Ծտարաբաղաբացիք ուղարկում են ձանադարհածախք 15 Կ. մարկաներով, տասնով գնողները ձանադարհածախք չեն վճարում: Տասնից աւելի գնողները 10 0/0 զիջում են ստանում:

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ, Գոթիկական պրոպագանդայի վրա, տուն ձարարապետ Բելյոի: Գրասենյակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կես օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տոներէրց:

ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայոց ծխական ուսումնարաններում: Մայիսի 18 և 19-ին կաթող: ս. Գէորդ եկեղ. ուսումն. — — 20-ին Չորաբաշի ս. Գէորդ եկեղ. ուսումն. — — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն. — — 24-ին ս. Մինաս եկեղ. «Իզմիրեան» ուսումն. — — 25 և 26-ին Կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն. — — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն. — — 28 և 31-ին Աւետեաց եկեղ. տղ. և օր. ուսումն. Գունիսի 1, 2 և 3-ին Հաւարք. Մարիամեան օր. ուսումն. — — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն. Հարցաքննութիւնները կը սկսին առաւօտեան 8 ժամին: Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց: Մանկավարժական ինստիտուտի վերջին դասատան ուսանող պատրաստում է աշակերտներ այստեղ կամ ամարանոց. Հասցեն. Александровскій учительскій институтъ на Михайловской улицѣ (колонія) Александръ Захаровъ.

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VI գրքոյը Զ. Կիկիւնի «Նարս և Սկեսուր» թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի: Գրքոյի վերջը իբրև յաւելում տպուած են գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն: Գինն է 15 Կ. Հասցեն Тифлисъ. Тиграну Назарянцъ. 2—4

Շտաբ-կապիտան ՄԱՆԻԿՈՎ յայտնում է որ մայիսի 18-ին, ներկայ 1882 թւին Անդրկովկասի Պրիկոնիս անուրդ կը լինի, երեք օրից յետոյ կրկնաձուրդով եղիսաբէթ ՄԱՆԻԿՈՎԱՅԻՆ պատկանող տան վրա, որ գտնվում է Թիֆլիսի 1 բաժնի 3-օրդ շրջանում: Սապեօրի փողոցում, 1879 թւին արած փոխառութեան վրա մնացած 8,148 ռուբլ պատկիկ պատճառով: Ցանկացողները այդ տունն առնելու, կարող են տեսնել զնահատողական ստորագրւրը Պրիկոնիսում: 2—5

Лечебница Общества Покровительств животныыхъ, Песковская улица д. Гвритишвили. Приемъ больныхъ съ 8 до 9 часовъ утра ежедневно, за исключеніемъ воскресныхъ, праздничныхъ и табельныхъ дней.

Կենդանիների ձովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան բժշկանոցը գտնվում է Սաղի վրա, Պետիօվսկայա փողոց, տուն Գվրիտի-Ղվիլի: Ընդունելութիւն հիւանդ կենդանիների ամեն օր, ժամը 8-ից մինչև 9 առաւօտեան, բացի կիրակի և տօն օրերից: 6—10

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաններ, պանիր-չեստեր, խաւիար և այլն: Փախովում են շատ էֆան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ Նշն տեղ ծախվում են. բազկաթում մահճակալ 8 Կ., ամբողջ ՀԱԳՈՒՍ 12 Կ., չը թըջող վերարկուներ 6—18 Կ. և մեծ քանակութեամբ ԲԷՎՈՂՎԵՐՆԵՐ, դանակներ և այլն: 10—10

Միջի փողոց, կաթօլի շէսկայա փողոցի անկիւն ՁՆ 13. Աւելի էֆան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրԱՎԱՔՆԵՐ 8—30 Կ., չաւանդաններ 250—25 Կ., սակոյցածներ 1. 30—12 Կ., սոււն դուկներ ձանադարհի 6—35 Կ., մարաններ (поребцы) 6—25 Կ., սաւօ վարներ 60 Կ.—1.25 ֆունտը, կուկունի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ համալով ամաններ, ոււմի վալի ի կնէր մրաւօրնի 38 Կ.—75 Կ., հրացաններ երկու ըւլանի 6—32 Կ., ոււվոլէրներ սմենայն տեսակ 3. 50—30 Կ., պատրաններ. (գուլաններ) ընկոլիլի, սիգար Ռէնգարդի ֆարրիկից. պատկերու և թամբաբու կուշնարովի գիլգի պատկերով. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չոյ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիւս. (սուկուր չոյու և կաֆէի) Էրնէմի. կօֆէ Էրնէմի 28 Կ.—240 Կ., պրօրկայ զինէֆաճաններ, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) զոյթուկ (пучкъ), պաղտաններ սամովարի և չոյու, դանակ չանգալ գանապան ֆարրիկաների 1 Կ. 20 Կ.—25 Կ. դուժիկը. զրչակիներ 1 Կ. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջրի 1—60 Կ.—12 Կ., դաւանակ հացի 20 Կ.—1 Կ., հատը, կուկունի 1—40 մինչև 3—20 Կ. պրօրկայ մի կարելու մաշնայ. Անգլիական ութներ, Բրիտանիայի չոյնիկներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակ, Չարսիներ կաֆէի համար, ֆրիտեր—Չուր մարբուր, կրախալ կարօրէն 18 Կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փողտի, կանվերտներ, սուրբուչ, մափա, զրիչ երկաթէ, զրչակի, քարեֆրասակ, թանաք, թանաքամաններ, պրեսպարիներ, գրայներ սեղանի և չոյու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկի գուժիկը 1—50 Կ. մինչև 12 Կ., և չոյու 45 Կ.—5 Կ., չու միչկէք 45 Կ.—5 Կ., շամադաններ ամեն տեսակ 25 Կ.—12 Կ. Չուխ, պրեսպարիկաններ վարչակու, Ռեճիւնի կԱՂՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. Չուխ, շապիկներ, մարդկերանց զարուտիկներ, զոնտիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրիկ և շոքի, սանդղիչ շրմայու ոսկորէ, գուտապրիչովի և փայտէ, շոտկաներ զլիւր, շրի, սապիկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատուի կօժի և շալէ (гарусь) ֆէլչատիք մարդկերանց և կանանց, պրոսաններ, քրաններ, պատկերու ամաններ և մանր գոյանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտալէտ ջրի, պուրպ, Գլիցերին ջրի քացախ, հոտալէտ պարաշոներ կՈՒՆԻ ԼԱՔՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն: Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՅԻՆ ՏԵՐ ՆԻԿՈՎՈՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթողիկաց փողոցի անկիւնում ՁՆ 13. Ծտարաբաղաբացիք կարող են զիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову. 53—180